

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թ-ի 199

Որպէսզի պատասխանենք սրբերի յարատեւութեան վարդապետութեան հակառակ առարկութիւններին, շատ օգտաւէտ կ'լինի որ նախ հասկանալ թէ այս վարդապետութիւնը ինչ չի նշանակում կամ չի ուսուցանում:

Միայն ճշմարիտ հաւատացեալներ կ'յարատենն մինչեւ վերջ – Յարատեւութեան վարդապետութիւնը չի ուսուցանում որ բոլոր նրանք որոնք դաւանում են լինել հաւատացեալներ, կամ որոշում են կայացրել Քրիստոսի համար, կամ գնում են եկեղեցի, կ'յարատենն մինչեւ վերջ: Փոխարէն, յարատեւութեան վարդապետութիւնը միայն ճշմարիտ հաւատացեալների վերաբերեալ է՝ նրանք որոնք իրապէս վերստին ծնել են, այսինքն, սրբերը (Բ. Կորնթացիս 1:1, Եփեսացիս 1:1, Փիլիպպեցիս 1:1):

Աստուած խոստանում է պահել միայն նրանց որոնք Իրանն են, Իր յատուկ ժողովրդին, Իր սրբերին, նրանց որոնք Նա անցեալի յախտենականութեան մէջ ընտրեց եւ որոնց համար Քրիստոսը տուց Իր կեանքը: Սրանք են Յովհաննէս 6ի ժողովուրդը որ Հայրը տալիս է Իր Որդուն (Յովհաննէս 6:37-40), սրանք են Յովհաննէս 10ի Քրիստոսի ոչխարները որոնք երբէք չեն կորչի (Յովհաննէս 10:27-29), եւ սրանք են Եբրայեցիս 10ի ժողովուրդը որոնք «սրբուցան Յիսուս Քրիստոսի մէկընդմիշտ պատարագովը» (Եբրայեցիս 10:10): Միայն սրանք են որոնք կ'յարատենն մինչեւ վերջ:

Ոչ բոլորը որ հաւատացեալների նման են երեսում ու հնչում ճշմարիտ հաւատացեալներ են – Կան շատ մարդիկ որոնք դաւանում են լինել հաւատացեալներ, որոնք ներկայ են եկեղեցում, որոնք անում են նոյն բաները որ ուրիշներն են անում եկեղեցում, որոնք արտաքինապէս երեսում եւ հնչում են որպէս հաւատացեալներ, սակայն իրականում ճշմարիտ հաւատացեալներ չեն: Աստուածաշունչը շատ տեղերում զգուշացնում է այս վիճակի առթիւ:

Սրա առթիւ եղած դասական հատուածը Քրիստոսի սերմնացանի առակն է, նաեւ ճանաչած որպէս հողերի առակը քանի որ Քրիստոսի շեշտն է տարբեր հողերը որոնց վրայ սերմն է ընկնում (Մարկոս 4:3-8, 14-20): Յաւօք սրտի, այս առակը յաճախ սխալ կերպով է մեկնաբանել: Սերմն աւետիսն է եւ սերմնացանը որեւէ մէկն է որը հռչակում է աւետիսը: Տեսնում ենք որ հողագործը ցրում է սերմը հեռու ու լայն, եւ ուստի աւետիսը պիտի քարոզվի հեռու ու լայն, անխորաբար: Այս աստուածաբանութեան մէջ ճանաչած է որպէս արտաքին կոչումը: Առաջին խումբը կազմւած է նրանցից որն չեն ցոյց տալիս որեւէ հետաքրքրութիւն աւետիսի հանդէպ եւ անմիջապէս մերժում են Քրիստոսին: Երկրորդ խումբը նրանք են որը լսելով անմիջապէս եւ ուրախութեամբ պատասխանում են. բայց երբ տառապանք է գալիս, ունենալով ծանծաղ արմատներ նրանք ընկնում են, մերժելով Քրիստոսին: Ուստի նրանց հաւատքը բացայայտում է որպէս մի կեղծ հաւատք: Երրորդ խումբը կազմւած է նրանցից որն լսում են աւետիսը ու նաեւ կարծես թէ հաւատում են, եւ գուցէ նոյնիսկ կարող են դիմակայել Քրիստոսի համար բարձրացած հակառակութիւնին: Բայց ապա փշերը բարձրանում են նրանց շուրջը՝ ներկայացնելով աշխարհքի հոգսերը, ինչպէս համբաւ, հարստութիւն, զօրութիւն, եւ հաճոյք, եւ խեղդում են նրանց: Ուստի նրանց հաւատքը նաեւ ցուցադրում է որպէս մի կեղծ հաւատք: Ի վերջոյ, չորրորդ խումբը կազմւած է նրանցից որն լսում են աւետիսը, պատասխանում են հաւատքով, եւ պտղաբերում են:

Այստեղ կան մի քանի կէտեր որն հարկ է որ մենք շեշտենք: Նախ, կարդում ենք որ սերմը ընկաւ բարի հողի վրայ: Տեսալ թէ Աստուածաշունչը ինչ է ասում մարդկութեան վերաբերեալ (Երեմիա 17:9, Հռովմայեցիս 3:10-12), ինչպէ՛ս է այս հողը բարի: Բարի է որովհետեւ Աստուած բարի դարձրեց այն: Աստուած է որը պատրաստում է այդ մարդկանց սրտերը: Աստուածաբանութեան մէջ այս ճանաչած է որպէս ներքին կամ ազդեցիկ կոչումը, կամ վերածնութեան վարդապետութիւնը (Երկրորդ Օրինաց 30:6, Եզեկիէլ 36:25-27, Բ. Կորնթացիս 4:6, 5:17, Եփեսացիս 2:1, 4-5): Երկրորդ կէտը որը նկատում ենք այն է որ բոլոր նրանք որոնք պատկանում են այս խմբին լսում են Խօսքը ու ստանում են այն: Նրանցից ոչ մէկը մերժում է աւետարանին: Եւ բոլորն էլ պտուղ են տալիս, բայց տարբեր չափերով՝ ներկայացնելով հաւատացեալների մէջ եղած աճման տարբեր աստիճանները: Երրորդ, Աստուած միայն փոխում է որոշների սիրտը ու ոչ բոլոր մարդկանցը (Հռովմայեցիս 9:16, 18): Սերմը, աւետիսի պատգամը, չարմատաւորեց նրանց մէջ որոնք պատկանում էին առաջին երեք խմբերին քանի որ նրանց սրտերը բոլորը խիստ (կարծր) էին՝ ներկայացնելով հոգեւորապէս մեռած մարդկանց: Հակառակ այն ինչ որ Քրիստոնէաների մեծ մասը հաստատում է, դրանք հաւատացեալներ չէին որն տարբեր պատճառներով ընկան ու կորցրեցին իրենց փրկութիւնը: Բացի բարի հողը, բոլոր միւսները սուտ (կեղծ) հաւատացեալներ էին:

Ուստի, հարկ է մեզ յիշել որ արտաքին երեւոյթը, տենչը, զգացմունքը, եռանդն, ու խանդավառութիւնը, անպայման մէկի ներքին վիճակի ճշգրիտ ցուցանիշները չեն: Աստուածաշունչը զգուշացնում է որ եկեղեցի գալը ու նոյնիսկ Քրիստոնէաների կատարած բաների անելը չի նշանակում որ մէկը Քրիստոնէայ է: Գնահատեալ հաւատացեալները նրանք են որը շարունակում եւ դիմանում են մինչեւ վերջը. եթէ ոչ, Յիսուսը ասում է թէ՛ «Ես երբէք ձեզ չեմ ճանաչել» (Մատթէոս 7:21-23) եւ Յովհաննէսը ասում է որ նրանք «մեզանից չէին» (Ա. Յովհաննէս 2:19):